

«ԱԼՖԱՍԵԲՅՈՒՐԻԹԻՉ»

Սահմանափակ Պատասխանատվության Ընկերության

2021թ. տարեկան ֆինանսական վերլուծություն

2021 թ. Ընկերության ռազմավարությունը նպատակաուղղված է եղել այնպիսի միջնաժամկետ նպատակների իրականացմանը, ինչպիսիք են Ընկերության ֆինանսական ցուցանիշների կայունության ապահովումը, ներդրումային շուկայում գործունեություն իրականացնող ընկերությունների շարքում մրցունակ լինելը, Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի և Ն1 տնտեսական նորմատիվի ապահովումը, հաճախորդների կայուն սեզմենտի ապահովումը:

2021 թվականի ընթացքում ՀՀ մակրոտնտեսական միջավայրը ձևավորվել է ՀՀ-ում և ամբողջ աշխարհում համավարակի հերթական պիքի տարածման ազդեցությունների պայմաններում: 2020 թվականին սկիզբ առած նոր տիպի կորոնավիրուսի համավարակի, ինչպես նաև սանձազերծված Արցախյան պատերազմի ազդեցություններով պայմանավորված՝ ՀՀ տնտեսության բացասական զարգացումները շարունակվեցին նաև 2021 թվականին՝ կրելով նաև համավարակի 3-րդ պիքի բացասական ազդեցությունը: 2021 թվականի ընթացքում 12-ամսյա գնաճը կազմել է 5.8%՝ գերազանցելով ՀՀ Կենտրոնական բանկի նպատակային՝ (4 +/- 1.5%) ցուցանիշը: ՀՀ Կենտրոնական բանկի դրամավարկային խթանող քաղաքականությունը տարվա ընթացքում բերեց գնաճի աստիճանական կայունացման, ինչը հանգեցրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման 2.5 տոկոսային կետով՝ կազմելով 7.75%, հետևաբար ՀՀ Կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի և բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքները նույնպես աճել են՝ կազմելով համապատասխանաբար 9.25% և 6.25%: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումներն իրենց ազդեցությունն են թողել նաև պետական պարտատոմսերի շուկայի բոլոր հատվածներում:

Բորսայական և արտաբորսայական առևտրի շրջանակներում կատարված գործարքների եկամտաբերության տոկոսադրույքները 2021թ.-ի տարեսկզբից վերաֆինանսավորման տոկոսադրույքի աճին զուգահեռ գրանցել են թեթևակի աճ: Որպես վերաֆինանսավորման տոկոսադրույքի աճի հետևանք կարելի է նշել բանկերի կողմից կնքվող ռեպո գործարքների ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի գնահատման խստացումը: Ինչ վերաբերում է ռեպո գործարքների տոկոսադրույքին, ապա այն տարվա ընթացքում աճել է՝ 6.3-ից կազմելով 8.85%, ինչի արդյունքում գրանցվել է տոկոսային ծախսերի աննախադեպ աճ:

Նախորդ տարիների ընթացքում ՀՀ կողմից թողարկված և տեղաբաշխված միջին ժամկետային և երկարաժամկետ պետական պարտատոմսերն ունեցել են ցածր արժեկտրոնային եկամտաբերություն, բացի այդ դրանց նկատմամբ ֆինանսական շուկայում ձևավորվել են պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության ցածր ցուցանիշներ, սկսած պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման աճուրդներից, վերջացրած Հայաստանի ֆոնդային բորսայում և երկրորդային շուկայի գործարքների ընթացքում ձևավորված ցուցանիշներով: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացումն ուղղակիորեն ազդեց ֆինանսական շուկայի բոլոր մասնակիցների ֆինանսական ցուցանիշների վրա, քանի որ զուտ տոկոսային մարժայի մակարդակը նվազագույնն է եղել վերջին 6 տարիների ընթացքում:

Ամփոփելով Ընկերության հաշվետու տարվա գործունեության արդյունքները՝ կարող ենք արձանագրել, որ Ընկերության նախորդ տարվա գործարար ծրագրով

նախատեսված ցուցանիշներից շեղումները հիմնականում պայմանավորված են տարվա ընթացքում, Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ, վերաֆինանսավորման տոկոսադրույքի կտրուկ աճով, ինչը Հայաստանի Հանրապետությունում ձևավորված սպասվածից բարձր գնաճի հետևանք է:

Արժեթղթերի շուկայում գործունեության 19 տարվա շարունակական փորձը, գործնական կապերը, աշխատակիցների հմտությունը և իրազեկությունը թույլ են տվել ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին իրականացված գործողությունների արդյունքում ապահովել Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը և որոշակի կայունություն պահպանել պետական պարտատոմսերի շուկայում ստեղծված իրավիճակում:

Ընկերության կառավարման մարմինը դրական է գնահատում ստեղծված իրավիճակում աշխատակիցների կողմից կատարված աշխատանքները և նախատեսում է 2022 թվականի ընթացքում շարունակել ակտիվ աշխատել արժեթղթերի շուկայում՝ ներգրավելով պահի դրությամբ բանկային համակարգում գոյություն ունեցող ազատ ռեսուրսները և տեղաբաշխելով դրանք հիմնականում պետական պարտատոմսերում:

Նախատեսված խնդիրների կատարողականը գնահատվում է հետևյալ կերպ.

ա) ներդրումային ընկերության կապիտալիզացումը.

Ընկերությունն իր առջև նպատակ էր դրել ավելացնել ընդհանուր կապիտալը՝ 2021թ.-ի վերջին հասցնելով 1326 մլն դրամի: Ընկերության ընդհանուր կապիտալը նախորդ տարվա 951.1 մլն դրամի համեմատ տարեվերջի դրությամբ կազմել է 796 մլն դրամ: Ընկերության պորտֆելում առկա միջնաժամկետ և երկարաժամկետ պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորը վերջին վեց տարիների ընթացքում ունեցել է նվազման տենդենց, իսկ վերջին մեկ տարվա ընթացքում վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացմանը զուգահեռ ֆինանսական շուկայում գրանցվել է պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի բարձրացում, ինչն ուղղակիորեն ազդել է Ընկերության շահույթի վրա, մասնավորապես աճել են տոկոսային ծախսերը: Ընկերության 2021 թվականի ընթացիկ ժամանակաշրջանի շահույթը մինչև շահութահարկի գծով ծախսի նվազեցումը եղել է 100 մլն դրամ, իսկ զուտ շահույթը կազմել է 37 մլն դրամ:

Հարկ է նշել, որ 2021թ. հուլիսին Ընկերությունն արդեն իսկ ապահովել էր 1027 մլն դրամի չափով կապիտալ: Ընկերությունն այլ համապարփակ ֆինանսական ակտիվների վերագնահատման արդյունքում ունեցել է բացասական պահուստ և ընկերության կապիտալը նվազել է 134 մլն դրամով՝ հասնելով 796 մլն դրամի, որի շեղումը կանախատեսված ցուցանիշից կազմում է 39%: Բացի այդ Ընկերությունը 53 մլն դրամի չափով շահաբաժին է վճարել տարվա ընթացքում, ինչը նույնպես ներազդել է կապիտալի նվազեցմանը:

Կանոնադրական կապիտալը և գլխավոր պահուստը մնացել են անփոփոխ՝ կազմելով համապատասխանաբար 250.0 մլն դրամ և 37.5 մլն դրամ:


2021թ.-ի համար Ընկերության հիմնական խնդիրներից էր նաև ավելացնել ընդհանուր ակտիվների ծավալը հասցնելով 12 մլրդ դրամի: Նախորդ տարվա համեմատ 2021թ.-ի ընթացքում Ընկերությունն ավելացրել է ընդհանուր ակտիվների ծավալը 1632 մլն դրամով: Այսպիսով՝ 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր ակտիվները կազմել են 11.9 մլրդ դրամ, ապահովելով կանխատեսված ցուցանիշը 99%-ով:


Ինչ վերաբերում է Ընկերության ընդհանուր պարտավորություններին, ապա 2021թ. սեպտեմբերին Ընկերությունն արդեն իսկ ունեցել է՝ 11 մլրդ դրամ պարտավորություններ, ինչը պահպանվել է գրեթե նույն ծավալի շրջանակներում և 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 11.1 մլրդ դրամ՝ նախատեսված 10.6 մլրդ դրամի փոխարեն, ինչը պայմանավորված է ֆինանսական շուկայում վերաֆինանսավորման տոկոսադրույքի և ռեպո տոկոսադրույքների բարձրացմամբ:

2021 թվականի գործունեության ընթացքում ընդհանուր կապիտալի, ընդհանուր պարտավորությունների և ընդհանուր ակտիվների տարրերի կառուցվածքային փոփոխություններ չեն կատարվել: Ընդհանուր կապիտալի և ընդհանուր պարտավորությունների հարաբերակցության մակարդակը 2021 թվականի ընթացքում կազմել է 7.5%, իսկ ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության մակարդակը՝ 7%:

Բորսայական և արտաբորսայական առևտրի շրջանակներում կատարված գործարքների եկամտաբերության տոկոսադրույքները տարեվերջին միտում են ունեցել բարձրանալու:


Ստորև ներկայացնենք 2020թ.-ից 2021թ. շուկայում տեղաբաշխված պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերության տոկոսադրույքի անը:






բ) ներդրումային հիմնական և ոչ հիմնական ծառայությունները.

«Ք» ֆինանսական ցուցանիշները 2021թ.-ի ընթացքում տատանվել են, ինչը ազդեցություն է թողել Ընկերության գործունեության արդյունքների վրա: Ներկայացնենք, թե տարեվերջին ինչ պարտատոմսեր են եղել շրջանառության մեջ և դրանցից որոնք են համարել Ընկերության պետական պարտատոմսերի պորտֆելի կառուցվածքը:




31.12.21թ. դրությամբ ՊՊ ծավալը շրջանառության մեջ և
Ընկերության պորտֆելում



Թողարկման համար	Շրջանառության ծավալ	Ընկերության պորտֆելի պետական պարտատոմսեր	Ընկերության պորտֆելի պետական պարտատոմսերի մասնաբաժինը շրջանառության ծավալում
AMGB30163472	125,700,405,000	3,183,000,000	2.53%
AMGB2029A366	71,000,000,000	1,608,211,000	2.27%
AMBG1029A292	153,761,459,000	850,000,000	0.55%
AMGB1029A250	38,379,420,000	940,283,000	2.45%
AMGB1029A235	13,625,000,000	811,267,000	5.95%
AMGB20172327	35,500,000,000	700,000,000	1.97%
AMGB1029A276	46,420,000,000	590,000,000	1.27%
AMGB2029A374	75,266,500,000	144,000,000	0,19%
AMGB1129A316	142,990,450,000	284,000,000	0,19%
AMGN60294227	45,199,400,000	220,000,000	0.48%
AMGN60294268	57,485,200,000	200,000,000	0,35%
AMGB3129A504	112,653,843,000	180,000,000	0.20%
Ընդամենը	774,991,227,000	9,710,761,000	1.25%

Կարելի է նկատել, որ 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության պորտֆելում գերակշռում են երկարաժամկետ պարտատոմսերը՝ հետևյալ հարաբերակցությամբ:



Այս հարաբերակցությունը պայմանավորված է Ընկերության երկարաժամկետ նպատակներով: Ընկերության 19 տարվա աշխատանքային գործունեության ընթացքում ապահովված ընդհանուր կապիտալի աճը, ինչպես նաև տարիների փորձն ու գիտելիքները, ընթացքում անընդմեջ կատարվող շուկայի վերլուծությունները թույլ են տալիս մանրել ֆինանսական շուկայում և Ընկերության արժեթղթերի պորտֆելը երկարաժամկետ պարտատոմսերով համալրելը դառնում է իրատեսական, ոչ միայն ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների տեսքով պահելու, այլև այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների տեսքով, առաջիկա տարիներին վաճառելու և լրացուցիչ եկամուտ ստանալու համար:

Պորտֆելի արդիականացման նպատակով Ընկերությունն ավելացրել է 10-30 տարեկան երկարաժամկետ պետական պարտատոմսերի ծավալը: Երկարաժամկետ պարտատոմսերի ծավալը նախորդ ժամանակշրջանի համեմատ ավելացել է մոտ 2 մլրդ-ով:

Ընկերությունը մտադիր է շարունակել պորտֆելի արդիականացման գործընթացը և 2022թ. մասնակցել երկարաժամկետ և միջնաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի հերթական տեղաբաշխումներին:


Ընկերության պորտֆելի դիվերսիֆիկացիա ապահովելու, ինչպես նաև ֆինանսական կազմակերպություններին աջակցելու նպատակով 2021թ.-ի ընթացքում Ընկերությունը շարունակել է ներդրումներ իրականացնել նաև առաջատար ընկերությունների կողմից թողարկված կորպորատիվ արժեթղթերում: 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կորպորատիվ արժեթղթերի պորտֆելը ունեցել է հետևյալ կառուցվածքը.

(հազար

դրամ)

	Դրամային պարտատոմսեր	Դոլարային պարտատոմսեր	Ընդամենը
«Կոնվերսբանկ» ՓԲԸ		31,560	31,560
«Արարատբանկ» ՓԲԸ		24,457	24,457
Ընդամենը		56,017	56,017


Իր գործունեությունն ապահովելու նպատակով Ընկերությունը միջոցները ներգրավել է ՀՀ գործընկեր բանկերից մի քանիսի հետ ռեպո համաձայնագրերի միջոցով: Ստորև ներկայացված է, թե առ 31.12.2021 թ. դրությամբ ինչ ծավալի ռեպո գործարքներ են իրականացվել բանկերից յուրաքանչյուրի հետ:



Հարկ է նշել, որ 2021թ. ընթացքում բանկերի կողմից տրամադրվող ռեպո համաձայնագրերի ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի գնահատման պայմանները խստացրել են, ինչը պայմանավորված է բանկերի կողմից ստեղծված պայմաններում սեփական ռիսկերի կառավարման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, բանկերի կողմից, պետական պարտատոմսերի եկամտաբերության կոր+3%, haircut*10% գնահատման արդյունքում Ընկերության ազատ պետական պարտատոմսերի ծավալները կրճատվել են:

Դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունեցել է 10.6 մլրդ դրամի ռեպո գործարքներ՝ միջինը 8.85% տարեկան եկամտաբերությամբ, ինչը 0.19 տոկոսային կետով բարձր է շուկայում առկա միջին կշռված տոկոսադրույքից: Նախորդ տարիների ընթացքում ֆինանսական շուկայում ձևավորված պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության ցածր ցուցանիշների պարագայում և վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման արդյունքում 2021 թվականին Ընկերության տոկոսային ծախսերը գրանցեցին աճ, իսկ զուտ տոկոսային մարժան գրանցել է վերջին տարիների ընթացքում ամենացածր ցուցանիշը: Ընկերության ներդրողների զգալի մասը հաշվի առնելով 2021թ. ընթացքում շուկայում տիրող անկայուն վիճակը հետ են կանչել իրենց ներդրումները, ինչը բացասական կերպով է ազդել տոկոսային եկամուտների վրա:


Վերոնշյալից ելնելով ռեպո համաձայնագրերի դիմաց վճարված տոկոսները 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 801.3 մլն դրամ:



Վերոնշյալից ելնելով՝ 2021թ.-ի տարեվերջի դրությամբ հակադարձ ռեպո համաձայնագրերից ստացված տոկոսագումարներից Ընկերության ստացած եկամուտը կազմել է 13.9 մլն դրամ:

ՌԵՊՈՑՈՆԱԿԱՆ ԿՆՈՍԱԴԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ 31.12.21

- Շուկայական միջին կշռված տոկոսադրույքը
- Ընկերության ռեպո գործարքների միջին տոկոսադրույքը
- Հակադարձ ռեպո գործարքների միջին տոկոսադրույքը
- Փաթեթի կառավարման շրջանակներում ռեպո գործարքներ միջին տոկոսադրույքը




Բացի ռեպո համաձայնագրերի շրջանակներում որպես ապահովման միջոց օգտագործված արժեթղթերից, Ընկերությունն իր հաշիվներին ունի նաև ազատ արժեթղթեր, որոնք սեփականության իրավունքով պատկանում են Ընկերությանը, իսկ անվանատիրոջ հաշիվներին հաշվառվող արժեթղթերը, պահառության շրջանակներում Ընկերության մոտ պահվող արժեթղթերն են, որոնք սեփականության իրավունքով պատկանում են ներդրողներին:



գ) Ընկերության շահութաբերությունը, եկամուտների և ծախսերը.

Ընկերության եկամուտների կառուցվածքի մեջ զգալի մաս են կազմում ՀՀ պետական արժեթղթերից ստացված տոկոսային եկամուտները, որոնք 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են 1100 մլն դրամ՝ 220 մլն դրամով գերազանցելով նախորդ տարվա նույն ցուցանիշը: Հարկ է նշել, որ Ընկերության պետական պարտատոմսերի պորտֆելի 76%-ը դասակարգվել է որպես ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, իսկ 24%-ը՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվներ: Ընկերության ՀՀ պետական պարտատոմսերի պորտֆելի այս կառուցվածքը թույլ է տալիս ունենալ կայուն եկամուտ և գերծ մնալ շուկայական տոկոսադրույքների տատանումներից առաջացած վնասից:



Այսպիսով՝ 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ընդհանուր տոկոսային եկամուտը կազմել է 1122 մլն դրամ՝ 112%-ով գերակատարելով գործարար ծրագրով նախատեսված (1000 մլն դրամ) ցուցանիշը: Նշենք, որ Ընկերության հակադարձ ռեպոների ծավալների կրճատման պատճառով, նվազել են դրանց մասով

նախատեսվող տոկոսային եկամուտները:

Ինչ վերաբերում է տոկոսային ծախսերին, ապա Ընկերությունը նախատեսել էր ունենալ 540 մլն դրամի ծախս, իսկ փաստացի տոկոսային ծախսը 2021թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 811 մլն դրամ: Տոկոսային ծախսերի ցուցանիշի շեղման պատճառ է հանդիսացել ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի կողմից վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացմամբ պայմանավորված ռեպո գործարքների տոկոսադրույքի բարձրացումը, ինչը տարվա ընթացքում աճել է՝ 6.3-ից կազմելով 8.85%:

Արդյունքում՝ 2021թ.-ի տարեվերջին զուտ տոկոսային եկամուտը կազմել է 311 մլն դրամ: Նախորդ տարիների ընթացքում ֆինանսական շուկայում ձևավորված պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության ցածր ցուցանիշների պարագայում և վերաֆինանսավորման տոկոսադրույքի բարձրացման արդյունքում 2021 թվականին Ընկերության տոկոսային ծախսերը գրանցեցին աճ, իսկ զուտ տոկոսային մարժան գրանցել է վերջին տարիների ընթացքում ամենացածր ցուցանիշը:

(հազար դրամ)

	31.12.20	31.12.21	2021թ. կանխ.
Տոկոսային և նմանատիպ եկամուտներ	956,233	1,122,457	1,000,000
Տոկոսային և նմանատիպ ծախսեր	482,396	811,434	580,000
Չուտ տոկոսային և նմանատիպ եկամուտ	473,837	311,023	420,000
Ստացված զուտ կոմիսիոն և այլ վճարներ	-725	37,268	-900
Չուտ եկամուտ առևտրային գործառնություններից	214,625	-26,677	150,000
Գործառնական եկամուտներ	691,078	329,280	569,100
Շահույթ/վնասը մինչև հարկումը	416,682	100,136	304,100
Ժամանակահատվածի շահույթ/վնաս	339,276	79,143	249,362

Տեղաբաշխված միջոցների միջին կշռված տոկոսադրույքը պլանավորվում է պահպանել առնվազն 9-10% մակարդակի վրա՝ 8.85-9.5% ներգրավվածի դիմաց, իսկ զուտ տոկոսային մարժայի նվազագույն մակարդակը (ներգրավված և տեղաբաշխված միջոցների միջին կշռված տոկոսադրույքների տարբերություն)՝ 0.15-0.5%:

Վերջին վեց տարիների ընթացքում ՀՀ կողմից թողարկվել և տեղաբաշխվել են ցածր արժեկտրոնային եկամտաբերությամբ պետական պարտատոմսեր, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և դասակարգվել են 76%-ը որպես ամորտիզացված արժեքով հաշվարկվող ակտիվներ, իսկ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվները՝ 24%: Չուտ տոկոսային եկամուտների վրա ողջ տարվա ընթացքում ազդեցություն են ունեցել ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքների կտրուկ աճը դեպի վերև: Չուգահեռներ տանելով 2014-2016 թթ. և 2021թ. Պետական պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերության կորերի և վերաֆինանսավորման տոկոսադրույքի միջև, կարելի է նկատել, որ մինչև մարում եկամտաբերության կորը ավելի ցածր է եղել, քան

վերաֆինանսավորման տոկոսադրույքը, ինչի հետևանքով նվազել է գուտ տոկոսային մարժան:

Հաշվի առնելով, որ ըստ Ֆինանսների նախարարության կողմից հրապարակված 2021 թ. վերլուծության կանխատեսված ցուցանիշների ապահովումը նախատեսվածից ցածր մակարդակում պայմանավորված է բարձր գնանային միջավայրի ձևավորմամբ (12 ամսյա գնաճը կազմել է 9.8%, ինչը 8.2% տոկոսային կետով ավել է նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ), ինչը հանգեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքի, ապահովման միջոց հանդիսացող պետական պարտատոմսերի եկամտաբերության կորերի և ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքների պայմանների վատթարացմանը: Հաշվի առնելով, որ ըստ Ֆինանսների նախարարության կողմից հրապարակված 2021 թ. Վերլուծության՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից միջնաժամկետ հորիզոնում գնահատվել էր գնաճի կայունացում նպատակային ցուցանիշի շուրջ, իսկ կանխատեսված ցուցանիշից գնաճի շեղման ռիսկերը միջնաժամկետ հորիզոնում գնահատվել են հավասարակշռված՝ գնաճի կենտրոնական արժեքից դեպի ներքև՝ 1.5 տոկոսային կետի չափով (այսինքն՝ գնաճի ներքին սահմանը 2.5% էր) և դեպի վերև շեղումը՝ 1.5 տոկոսային կետի չափով (վերին սահմանը 5.5% է), ուստի 2021 թվականին ֆինանսական շուկայում ստեղծված պայմաններում ֆինանսական գործիքների կիրառումը կարելի է համարել կտրուկ, ինչը բարձր ռիսկայնություն ստեղծեց ինչպես շուկայում գործող ֆինանսական կազմակերպությունների, այնպես էլ՝ ներդրումային ընկերությունների համար: Նման պայմանները բարդացնում են Ընկերության կողմից գործարար ծրագրով կանխատեսված ցուցանիշների ապահովումը, քանի որ վերջիններս հիմնված են արտաքին միջավայրից ազդեցությունների միտումների և դրանց նկատմամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից կանխատեսվող զսպող քաղաքականության կանխատեսումների վրա:

Այսպիսով, 2021թ.-ի ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում Ընկերությունն արդյունավետ կերպով կատարել է իր առջև դրած նպատակները և պահպանել համեմատական կայունություն ժամանակաշրջանի համար:

դ) հաճախորդների քանակը, վերջիններիս փոփոխության դինամիկան.

2021 թվականի տարեսկզբին Ընկերությունը շարունակել է համագործակցել ֆիզիկական և իրավաբանական անձ ներդրողների հետ, որոնց հետ կնքվել են ՀՀ պետական պարտատոմսերի առք ու վաճառքի պայմանագրեր և հակադարձ ռեպո գործարքներ:

Ինչպես արդեն նշվել է 2021թ.-ի ընթացքում Ընկերության ներդրողների զգալի մասը, հաշվի առնելով շուկայում տիրող անկայուն վիճակը, հետ են կանչել իրենց ներդրումները, ինչը բացասական կերպով է ազդել տոկոսային եկամուտների վրա, սակայն համագործակցությունը շարունակվել է պահառության ծառայությունների շրջանակներում, ինչպես նաև կնքվել են պետական պարտատոմսերի փոխառության պայմանագրեր:

Վերոնշյալ հանգամանքներից ելնելով՝ առ 31.12.2021 թվականի դրությամբ Ընկերությունը չունի հաճախորդների նկատմամբ պահանջներ:

ե) կադրային քաղաքականություն.

Ընկերությունն իր կադրային քաղաքականությունը կառուցում է երկարաժամկետ համագործակցության, աշխատակիցների նկատմամբ խրախուսման սկզբունքների հիման վրա: 2021 թվականի ընթացքում Ընկերությունն ավելացրել է աշխատակիցների քանակը՝ ընթացիկ գործունեությունն ավելի արդյունավետ, արագ և որակյալ կազմակերպելու համար:

Ընկերությունը մշտապես ուշադրություն է դարձնում սեփական կադրերի պատրաստման և վերապատրաստման աշխատանքներին, որը թույլ է տալիս աշխատակիցներին յուրացնել փոփոխվող օրենսդրական դաշտը, ուսումնասիրել գործընկերների հետ համագործակցության ուղիները, ներդրվող և մշակվող տեխնոլոգիաները և այլն: Ընկերությունը խրախուսում է նաև աշխատակիցների մասնագիտական որակավորումը և ձգտում է նրան, որ բոլոր աշխատակիցներն ունենան համապատասխան որակավորում: 2021թ. մի քանի աշխատակիցներ ստացել են նաև լրացուցիչ մասնագիտական որակավորումներ՝ աշխատանքների փոխարինելիությունն ու անընդհատությունն ապահովելու նպատակով:

Նշենք, որ Ընկերության գործունեության հետ առնչվող բոլոր աշխատակիցներն ունեն բարձրագույն կրթություն, աշխատակիցների մեծամասնությունն ունի համապատասխան բարձր որակավորում և արժեթղթերի ոլորտում աշխատելու բազմամյա փորձ:

Ընկերության աշխատակիցները 2021 թվականի ընթացքում բարեհաջող հանձնել են քննություններ և ստացել որակավորման վկայականներ, ինչն էլ վկայում է, որ Ընկերությունը շահագրգռված է լավագույն կադրեր պատրաստելու հարցում:

ը) նորամուծություններ.

Ընկերությունը 2021թ. ընթացքում միջոցառումներ է ձեռնարկել ուսումնասիրելու Ռուսական արժեթղթերի շուկաները, որը կարող է հետագայում արժեթղթերի շուկայում և ավելի գրավիչ դարձնել Ընկերության կողմից առաջարկվող ծառայությունների շրջանակը: Ընկերությունը Ռուսաստանի արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցներից ստացել է գործնական առաջարկ՝ բացելու հաշիվներ և համագործակցել:

Ընկերությունը 2021թ. ընթացքում լիարժեք օգտագործել է Հաշվապահական հաշվառման Հայկական ծրագրերը, հատուկ բանաձևերի կիրառման արդյունքում հեշտությամբ արտահանել է ՀՀ կենտրոնական բանկ հաշվետվությունների համար անհրաժեշտ տեղեկությունները: Պետական արժեթղթերով իրականացվող գործարքների արագ և որակով կատարման համար Ընկերությունը գործարքներն իրականացնում է CBANET համակարգի միջոցով:

թ) մարկետինգային քաղաքականություն.

Ընկերության մարկետինգային քաղաքականությունը 2021 թվականին ուղղված է եղել պետական պարտատոմսերում ներդրումների ոլորտում կայուն դիրքերի գրավմանը, գործընկերների հետ փոխաշահավետ համագործակցության ապահովմանը, ինչը նպաստել է հաճախորդների կայուն սեզմենտի ներգրավմանը:

Արժեթղթերի շուկայում գործունեության տասնինը տարվա շարունակական փորձը, գործնական կապերը, աշխատակիցների հմտությունը և իրազեկությունը թույլ են տվել ֆինանսական շուկայում ստեղծված իրավիճակում ժամանակին

իրականացված գործողությունների արդյունքում ապահովել Ընկերության
ընդհանուր կապիտալի նվազագույն չափի նորմատիվը:

Գործադիր տնօրեն

Գլխավոր հաշվապահ



Գ.Գրիգորյան

Կ.Սիմոնյան